

ձակեղ և հանդիսատես լինել այն արտակարգ շքեղ թափօրին, որով պատկերը մայր եկեղեցուց դուրս պիտի տանվէր: Թափօրը սկսվելուց դեռ մի քանի ատոյալ մայր եկեղեցու շուրջը անցուցարձը զգուշացնել էր, զինուորական երաժշտությունը և մի գունդ հեծելազոր առանձին չուք էին տալիս հանդիսին, խուսն թաղմունքն մէջ ուստիկանությունը կարգ էր պահպանում: Այնքանուհի բնան գեղեցիկ երկար և լայն փողոցի վրա շարք շար կանգնած էին զպրոցների աշակերտները և աշակերտուհիները իրանց ուսուցիչներով, երբ զանգերը հնչեցին և սկսվեց մեծաշուք հանդէսը, զորքը սկսեց գեղեցիկ կերպով նուագել և սեմինաբիայի երգեցիկ աշակերտները երգեցին շարականներ, բառական բարձրատիճան զինուորական և աշխարհական պաշտօնականներ, հաղթարներ, հոգեկորականներ ներկայ էին, արքեպիսկոպոսին համընթաց քայլում էր նահանգապետը, պատկերը տանում էին աղնուատում կանայք, իսկ ջերմեռանդ ամբողջ հաղթ էր տեղադրվում այդ մեծ փողոցում: Հանդիսատես հայ կանայքն էլ զգացված արտասուք էին թափում:

Ֆ.

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐՈՒԴԻՅՑ

Ապրիլի 17-ին

Այս երկրորդ շաբաթն է, որ այստեղ է գտնվում Աստրախանի թեմի առաջնորդ Արիստակես արքեպիսկոպոս Սեդրակյանը:

Անցած կիրակի տեղիս հայ ուսանողների մի ստուար խումբ ներկայացուց սրբազան հորը: Ընդունվելով չառ սիրալիք էր և սպասածից աւելի լաւ տպավորություն թողեց այցելողների վրա: Ուսանողները մէկը իր ընկերների կողմից դիմեց սրբազան հորը և կարճ խօսքերով արտայայտեց այն զգացմունքները, որ տածում են դէպի նա հայ ուսանողները: Մենք ուրախ ենք, սրբազան հայր,—վերջացրեց ուսանողը,—որ հայ հոգեւորականության մէջ ներկայումս կայ գոնէ մի մարդ, որ կրում է իր մէջ մեր ժողովրդի լաւագոյն ապագայի բոլոր յայտերն ու իղձերը:

Խառնատալից և բովանդակութեամբ լի էր սրբազան հոր պատասխանը: Նա ցանկութիւն յայտնեց, որ այն գանդատները ու մտքերը, որոնք լսվում են թէ մամուլի, թէ հասարակության մէջ, իբր թէ ուսանողները հեռանալով համայնքային նստարանից, թողնում են այնտեղ և իրանց ոգեւորող զաղախութիւնը, չարդաբանան հայ ուսանողների վերաբերմամբ: Նա ասաց, որ ժողովրդի բարօրութեան, նրա առաջադիմութեան գործը միայն այն ժամանակ կը զբոլի նպաստաւոր պայմանների մէջ, երբ նրան ղեկավարող զառաքելութիւնը մէջ կը լինի համեմատելիութիւն ու ներդրելիութիւն: Հոգեւորականութիւնը առանց ժողովրդի, առանց նրա մտաւոր, ինտելիգենտ մասի գործակցութեան, չէ կարող

առաջ տանել իր ծանր ու պատասխանատու դերը...

Այնուհետև խօսակցութիւն տեղի ունեցաւ մեր զպրոցական զործերի մասին, որոնց համար և եկած է սրբազան հայրը, վեհափառ կաթողիկոսի կարգադրութեամբ: Նա թաղադրութեան հանդիսին հրաւիրված է Մոսկվա, իբրև ներկայացուցիչ Աստրախանի թեմի, ապա կը սպասէ վեհափառ կաթողիկոսի կարգադրութեան, որի համաձայն սրբազանը կամ նորից կը վերադառնայ Պետերբուրգ, կամ կուղևորվի Աստրախան: Վերջը ուսանողները հրաժեշտ տալով, ամենամիտթարական տպաւորութեան տակ հեռացան:

Յով. Մեքն.

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱՊՈՒԼԻՍԻՑ

Ապրիլի 21-ին

Մեր հասարակութեան մէջ վաղուց էր միտք յղացել մի որ և է բարի և արժանաւոր գործով յաւերժացնել Նոցա Մեծութիւնների առաջնայ թաղադրութեան հանդէսը, սակայն, կարծես թէ մի արտաքին դրդողի էր սպասում, որ իրականացնի այդ ցանկությունը. և ահա առիթն էլ չուտով ներկայացաւ:

Ամսիս 17-ին կայացաւ շինական ժողով, որտեղ Օրդուբաթի պրիտառ Պավլով, զիմեղով հասարակութեան, առաջարկեց, թէ՛ արդեօք հասարակութիւնը չի ցանկանայ մի որ և է գործով յաւերժացնել Նոցա կայսերական Մեծութիւնների թաղադրութիւնը: Ժողովականները աչքի առաջ ունենալով բոլորիս համար նուիրական օրը, ուրախութեամբ արձագանք տուին այդ համակրելի առաջարկութեան:

Ժողովում առաջարկվեցին հետևեալ միջոցները. 1) հիմնել բուժարան. 2) բաց անել գրադարան-ընթերցարան և 3) պահել մի որդեգիր մի միջակայքը զպրոցում:

Առաջին հարցը պ. պրիտառի առաջարկութիւնն էր. նա խոստանում էր զուրկ բերել այդ գործը, եթէ միայն ազուլեցնենք համաձայնվել տալ տարեկան 2,000 ռ., մի բան, որ սրանք աւելանայ տարի ծախսում են բժշկութեան և դեղերի վրա. իսկ ինչ վերաբերում է մնացած ծախսին, նա յայտնեց, որ զբան կը մասնակցեն չրջակայ գիւղերը: Այդ առաջարկութիւնը երկար վիճաբանութեան նիւթ եղաւ: Չը փութելով այդ տեսակ հիմնարկութեան օգտակարութիւնը, հասարակութիւնը սակայն գտնում էր, որ նա Ազուլիսում չէ կարող այն օգուտները տալ, ինչպէս ուրիշ տեղերում և ուրեմն չի ծառայի իր նպատակին: Հասարակութիւնը այդ պատճառաբանում էր նրանով, որ ազուլեցնելուց ոչ մէկը չի համաձայնվի գնալ այնտեղ աշակերտ կամ բժշկվելու և ուրեմն կրկին ըստիպված կը լինի բժշկին հրաւիրել իր օժուրի վերջոյ, որ ամենապիտանուն է, չուտով Ազուլիսը կոչնենայ իր բժիշկը, որը աւելի

ևս աւելորդ է կայացնում բուժարանի գոյությունը: Վերոյիշեալ և մի քանի այլ պատճառների հիման վրա չունեցողից այդ առաջարկությունը, թէև պ. պրիտառը զգուշացնելով, սակայն վերջում հաւատաց նրանց անկեղծ զգացմունքներին և, որը ամենապիտանուն է, փարատվեց նրա կարծիքը ազուլեցնելու երեակայական հարատւութեան մասին: Այնուհետև առաջարկվեց գրադարան-ընթերցարանի հարցը, որին հասարակութիւնը ուրախութեամբ ձայն տուեց, որովհետև զբաղմունքները միայնակ զբաղմունքներ են, որոնցով հարմար է զգացվում: Սակայն պ. պրիտառը առաջարկեց միայնակ զբաղմունքների հարցը, որին նմանապէս ժողովականները ուրախութեամբ ձայն տուին: Որդեգիրը որոշվեց պահել թիֆլիսի ուսուցչական ինստիտուտում, ընտրելով դրա համար վերին-Ազուլիսի ջրաւոր դասակարգի ընդունակ զառաքելութեան: Վերոյիշեալ վճռի մասին կազմվեց համախօսական, որով վերին-Ազուլիսի հայ համայնքը պարտաւորվում է Նոցա կայսերական Մեծութիւնների թաղադրութիւնը յաւերժացնելու համար՝ ա) յատկացնել գրադարան-ընթերցարանին տարեկան 150 ռ., ընակարան և 500 ռ. էլ կանխիկ՝ սկզբնական ծախքի համար. բ) պահել թիֆլիսի Ալեքսանդրեան ուսուցչական ինստիտուտում մի որդեգիր, հոգալով վերջինիս բոլոր ծախսը:

Լսում ենք, որ մեր սիրողները կամենում են թաղադրութեան օրը տալ մի ներկայացում: Ա. Դաւթեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ

Ապրիլի 14-ին

Մեր գաւառի ժողովուրդը սնունդի և կերակրվելու կողմից անախաճանքի պայմանների մէջ է: Սրանից դեռ 4—5 տարի առաջ, մեր գիւղացիին ունենալով առատ հումք, վեր էր առնում իր մի տարվայ պաշարը և յաջորդ տարվայ սերմը, վաճառում էր աւելորդ ցորեն ու գարի, կարողանում էր պարտքը տալ, աղը դրած ձուկ ունենալ, պուրկերով լուր, եթէ ոչ չաբաթը մի քանի անգամ, գոնէ կիրակի օրերը նա միս էր ուտում, ունէր մի քանի կիթնիներ, օգտվում էր իւղից, պանրից, մածնից, կարագից, ժածկից... և բաւարար սնունդ էր տալիս իր ստանդարտին: Ֆիզիքապէս աւելի առողջ, կազդուրված և աշխատելու մեծ ընդունակութիւն ունէր, քան թէ այժմ: Այժմ չը կայ կիթնի, չը կայ իւղը, չը կայ միսը, ցորեն ու գարի փոխարէն գործ է ածում անսնունդ հացը, որը թմրեցնում է մարմնին, ֆիզիկապէս քայքայում է և անընդունակ է դարձնում աշխատելու, բանելու: Եւ թաւաքում ու սպասը (ապուր) չեմ փոխի ձեռք կերակուրների հետ: ասում էր գիւղացին և իսկապէս նա աւելի առողջ, աւելի զուարթ էր, քան քաղաքացին: Նա գիշեր ցերեկ բանում էր, ամառը

աւերակ քարավանսարաններ, կամուրջներ, մեծ զարկ տուեց վաճառակաւուրութեան, արմատից կտրեց առաջակութիւնները և աւարառութիւնները և իր այդ հանրօգուտ ձեռնարկութիւնների չնորհի գրաւեց ամբողջ Պարսկաստանի սէրը, համակրութիւնը և ժողովուրդը անուանեց նրան Վայր: Այդ ամենը նա կատարեց երկու երեք տարվայ ընթացքում, և չը բաւականանալով զբանով, նա իր վերանորոգական գործունէութիւնը կամեցաւ տարածել և Շահի հարէմի վրա, բայց չէր այդ էլ եղաւ նրա պարգիւրակն վախճանի պատճառ: Տեսնելով որ հարէմը կլանում է երկրի ֆինանսների մեծ մասը, Ամիր-Նիզամը փորձեց կրճատել նրա ծախսերը, սոսն՝ մասնափակել նրա աղքատներին, քաջանել ձեռքից և մեծ-վիզիրին, զիմաղրեց, միացաւ նրա անհամար թշնամիներին, բէֆօրմների թշնամիներին և հոգեւորականութեան հետ: Նա կարողացաւ համոզել Շահին, թէ Ամիր-Նիզամը մեծ վտանգ է սպաւնում նրա զահին և փառասիրական մեծ գիտուններ ունի, որ նրա գոյութիւնը ուղղակի կորուստ է Շահի անձի համար: Ամիր-Նիզամը արագ շահ խաբէրեց և Ամիր-Նիզամը արագ լեզու փայլեց: Նրան հետեւեց և իր կինը՝ Շահի քայքայ, որը միայն կարողացաւ գնահատել այդ մեծ մարդուն: Սակայն թշնամիները սկսեցին երկաթ ձեռքով քանդել տալ էր: Շահը երկար ժամանակ ընդդիմադրում էր, բայց վերջապէս կարող

դաշտերում, ձմեռը՝ տան մէջ, ոչ ցուրտը, ոչ անձրեւը և ոչ արեգակի կիզիչ ճառագայթները նրան խոչնդատ չէին հանդիսանում: Նա հնձում էր, կարում, կալում, խմում առողջարար թանը, աղօթում Աստուծուն և ուրախ ու զուարթ հանգիստ գտնում իր ընտանիքի մէջ: Նա ունէր ֆիզիքական ոյժ, սնունդի ու կերակրվելու միջոց, աշխատելու ընդունակութիւն:

Անցան այդ երանելի ժամանակները. բնութիւնը կարծես նախանձեց գիւղացուն, ուղարկեց իր պատուհասը—անբերրիութիւնը ու սովը. վրա տուեց պարտքատէրը, տարաւ կիթնի, իւղեց դեռ չը հնձած ու մրկածուի արտերը, ծախվեց գիւղացին սկսեց մուրալ, խմբերով գիւղացին պանդխտութեան, և վերադարձան հիւանդոտ, առողջութիւնից քայքայված:

Ներկայումս այդ ժողովուրդը, ճիշդ է, նոյնպէս աշխատում է, չարչարվում է, բայց ֆիզիքապէս ընկած է, չունի առաջվայ եռանդը, աւելի հանգստանում է՝ քան բանում. և զրա պատճառը անշուշտ պէտք է որոնել նրա կերակրվելու ու սնունդի մէջ: Այժմ նա միջոց չունի—չը կայ կիթնի, հացահատիկը իրան չէ բաւականացնում, պարտքերը չառացել են, արդիւնաբերող ոյժն չունի, գուրկ է անդադար կերակուրներից, գլխաված և աղքատ է,—ասա մեր գաւառի ժողովրդի մեծամասնութեան, աշխատող դասակարգի պատկերը, պատկեր, որը կարօտ է ինչպէս կարեկցութեան, նոյնպէս և ուսումնասիրութեան:

Վ. Յ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐ

Նոցա կայսերական Մեծութիւնների սրբազան թաղադրութեան ծայրագոյն արարողապետի հրատարակած յայտարարութեան համաձայն, բոլոր այն բարձրատիճան անձինք և ներկայացուցիչները, որոնք պէտք է մասնակցեն Նոցա կայսերական Մեծութիւնների Մոսկվա մասնելու հանդիսին, հրաւիրվում են լինել Մոսկվայում ոչ ուշ քան մայիսի 5-ը, իսկ այն բարձրատիճան անձինք և ներկայացուցիչները, որոնք չեն մասնակցում այդ հանդիսին, բայց պէտք է Մոսկվա գան թաղադրութեան առիթով—հրաւիրվում են լինել Մոսկվայում ոչ ուշ քան մայիսի 8-ը:

Նոցա կայսերական Մեծութիւնների թաղադրութիւնը չնորհաւորելու համար չինաց կայսրի կողմից Պետերբուրգ եկած արտակարգ ղեկաւան Լի-Պոնց-Չանց բերել է իր հետ չառ թանկագին ընծաներ: Ընծաների ընտրութիւնն արել է Չինաստանի մայր-թագուհին. նրանց մէջ նշանաւոր են երկու հին վազաներ, բրձնադանման մի մետաղից, որոնք 2,000 տարի առաջ են չինված: Այդ վազանները, ինչպէս ասում են իրանք չինացիները, զին չունենաւ Բացի այդ

զացան կորզել նրանից Ամիր-Նիզամի սպանութեան հրամանը: Դահլիճ, ֆիրմանը ձեռքին, սլացաւ Բաշան, և իմանալով որ Ամիր-Նիզամը բաղնիքումն է, գնաց այնտեղ և ստիպեց նրան բանալ իր երակը: Մի երկու ժամից յետոյ հասնում էր Շահի մի սուրհանդակ, որը բերում էր մի երկրորդ ֆիրման,—ձեռք չը տալու ամիրին, բայց արդեն ուշ էր:

Երիտասարդ Շահը սաստիկ տխրեց և իր ամբողջ կենսութեամբ չը կարողացաւ մոռանալ այդ յանցանքը: Այդ օրից, ինչպէս պատմում են բոլոր նրան մօտ մարդիկ, նրա սովորական, ուրախ և զուարթ դէմքը ընդունեց այն մեղաւոր-ձուռութիւնը, որ նրան յատուկ էր: Նա յաճախ կրկնում էր, որ Ալահը երբեք չէ ներելու իրան այդ սխալի համար և մի օր պատժելու է: Թէև նա խստութեամբ պատժեց Ամիր-Նիզամի թըշնամիներին, թէև նա որդեգրեց նրա երկու որդիներին և իր աղջիկներին հետ պահեց նրանց, բայց երբեք նա չը կարողացաւ մոռանալ իր աւրած մեծ սխալը:

Եւ, ճշմարիտ, Ամիր-Նիզամի մահը, որ ողբաց ամբողջ Պարսկաստանը և մինչև այսօր էլ ողբում է, մեծ կորուստ եղաւ այդ երկրի համար: Ոչ մի տարակույս չը կայ, որ ի՞նչ նա կենդանի մնար, Պարսկաստանն այսօր համեմատաբար վերանորոգված, կերպարանափոխված և բաղադրապատկերված կը լինէր:

(Կը շարունակվի)

Եւ ահա մի այդպիսի դժուար բօլետում Նասրէդին Միրզան կոչվեց ժառանգել իր հօր գահը և կառավարել Պարսկաստանը: Նա թաւրիղուհն էր, երբ մի օր, 1848 թվին, թաւրիղի ուսուց ընդհանուր հիւպատոս Անիլիօլը, ստանալով թէ՛հրանի ուսուց դեսպանից Մահմադ Շահի մահուան լուրը, յանկարծ մտաւ նրա մօտ և ողջունեց նրան իբրև Պարսկաստանի նոր Շահ: Այդ ժամանակ Նասրէդինը 18 տարեկան էր: Պէտք էր չառաւել չուտով թէ՛հրան հասնել:

Սակայն խեղճ Նասրէդինը Շահը այնքան աղքատ էր, որ նոյն իսկ թէ՛հրան գնալու համար ձանադարհածախս չունէր: Բայց նա ունէր մի մեծ գանձ. նա ունէր մի վիղրի, մի օգնական և խնամակալ, որին և պարտաւոր է իսկապէս Նասրէդինը Շահը թէ իր թագաւորութեան հռչակով և թէ իր սէրով ու ձգտումով դէպի կուլտուրան և բէֆօրմները: Այդ անձն էր Միրզա-Թաղի խանը. նա եղաւ երիտասարդ Շահի պաշտպան հրեշտակը. իր կարուկ և աղքատ գործունէութեամբ նա հացրեց մի քանի օրվայ մէջ պատանի Շահին թէ՛հրան և ձեռնարկեց անմիջապէս խիստ միջոցների խռովարարների դէմ: Շահի հօրեղբայր՝ Բահման-Միրզան, վախճանալով որ իրան չը կուրացնեն՝ վախճաւ և ապաստանեց ուսուց դեսպանատանը, ուսուց գրօչակի տակ: Ուսուց կառավարութիւնը ուղարկեց նրան Շուշի, որտեղ և նա մնաց մինչև իր մահը:

Տեսնելով իր քարտուղարի, Միրզա-Թաղի խա-

նի գործունէութիւնը, Նասրէդինը Շահը իսկոյն նշանակեց նրան առաջին մինիստր, յետոյ Ամիր-Նիզամ (մեծ-վիզիր) և ապա Նասրէզ, մի տիպոյտ, որին չառ քիչերն են արժանացել Պարսկաստանում, որովհետև այդ տիպոյտը նշանակում է Վայր թագաւորին: Շահը մինչև անգամ վեհապալեց նրան, ամուսնացնելով իր քրոջ հետ:

Եւ, ճշմարիտ, Միրզա-Թաղի խան ամիր-նիզամը մէկն էր այն հաղուադիւտ տաղանդաւոր պետական անձերից և վերանորոգիչներից, որոնց բայց չէր այդ էլ եղաւ նրա պարգիւրակն վախճանի պատճառ: Տեսնելով որ հարէմը կլանում է երկրի ֆինանսների մեծ մասը, Ամիր-Նիզամը փորձեց կրճատել նրա ծախսերը, սոսն՝ մասնափակել նրա աղքատներին, քաջանել ձեռքից և մեծ-վիզիրին, զիմաղրեց, միացաւ նրա անհամար թշնամիներին, բէֆօրմների թշնամիներին և հոգեւորականութեան հետ: Նա կարողացաւ համոզել Շահին, թէ Ամիր-Նիզամը մեծ վտանգ է սպաւնում նրա զահին և փառասիրական մեծ գիտուններ ունի, որ նրա գոյութիւնը ուղղակի կորուստ է Շահի անձի համար: Ամիր-Նիզամը արագ շահ խաբէրեց և Ամիր-Նիզամը արագ լեզու փայլեց: Նրան հետեւեց և իր կինը՝ Շահի քայքայ, որը միայն կարողացաւ գնահատել այդ մեծ մարդուն: Սակայն թշնամիները սկսեցին երկաթ ձեռքով քանդել տալ էր: Շահը երկար ժամանակ ընդդիմադրում էր, բայց վերջապէս կարող

կայսերական ընծաներից, ինքն լի-թոնդ-Չանգն էլ իր կողմից զանազան ընծաներ է բերել:

Թիֆլիսի քաղաքացու իշխան Ն. Արզու-տինսկի ուղարկել է «Новое Время»-ին հետևեալ հերթումը. «Պարոն խմբագիր, «Новое Время»-ի № 7198-ում տպւած Թիֆլիսի թղթակցութեան մէջ հաղորդւած է ի միջի ալոց, որ ինձ, քաղաքացու իշխան Արզուտինսկու մօտ եկել են երկու հայ երիտասարդներ, պահանջելով ինձանից 10,000 ռուբլի թիւրքմանային համար և մանրամասն նկարագրւած է, թէ ինչպէս այդ երիտասարդներին ես յանձնել եմ աստիկանութեան, չը տալով խնդրած փողը: Որովհետեւ ինձ հետ ոչ մի այդպիսի բան չէ պատահել և ձեր թղթակցի հաղորդածը սկզբից մինչև վերջը բոլորովին սուտ է, չը գիտեմ ինչ աղբիւրներից զաղած, ևս, ճշմարտութիւնը վերականգնելու համար, պատիւ ունեմ խնդրելու ձեզ, պ. խմբագիր, չը դառնալ իմ ներկայ հերքումը զետեղել ձեր լրագրի մօտակայ համարումս:

Երեքշաբթի, ապրիլի 30-ին, կայացաւ Կովկասեան Գիտատեսական ընկերութեան հերթական նիստը, որի ղեկավար պարագլուհն էր՝ մշակել խմբագրական յանձնաժողովի գործունեութեան կանոնադրութիւնը: Ժողովը որոշեց, որ յանձնաժողովը կազմւած լինի չորս անդամներից և զբաղվի լրագրի և հրատարակութեան անտեսական մասի հսկողութեամբ և զբաղան մասի վերաբերեալ ընդհանուր ցուցումներով: Գանձաժողովի անդամների ընտրութիւնը յետագայից յաջորդ ժողովին:

Վ. Գորնեմի նախագահեալ մի քանի ժամանակ առաջ պահանջել էր, որ իրան ներկայացնեն այն պաշտօնականների ցուցակը, որոնք չեն ընդունել հաղորդութիւն: Ռուսաց «Церковный Вестник» թերթը, քննելով այդ կարգադրութիւնը, գտնում էր նրան բոլորովին անպատասխանատու և սխալ: «Որչափ էլ մեծ լինի քրիստոնէական այդ պարտաւորութեան զանցառութիւնը, ասում է կրօնական թերթը, այնու ամենայն անկասկած է, որ այդպէս ապարդիւն է և ոչ ցանկալի ձևական հաշուառութիւնը: Այսպէս օրէնսդրութիւնը թելադրում է համոզմունքով և խրատով գործել և ոչ թէ արտաքին ճնշումով ու ստիպողականութեամբս:

Վ. ԲԻՆՆԱՎՈՒԹԻՒՄԻՅ մեզ գրում են. «Վեհա-փառ Կաթողիկոսի գրութեան համաձայն՝ վաղը, ապրիլի 22-ին, այստեղից ուղևորվում է ղեպի Էջմիածին Գրիգոր Եպիսկոպոս Աղափրեանս:

ՆՈՒՆԱԽԱՅԻՆՆԵՐ մեզ գրում են. «Քաղաքի մօտ, փոքր-Սալա հայկական գիւղում, անցեալները կայացաւ հասարակական ժողով, որտեղ որոշվեց նոր ուսումնարան շինել: Էին ուսումնարանը մի գումանաս շինութիւն էր, խիստ վնասակար առողջապահական տեսակէտից: Ուսումնարանի յատակադիրը արդէն պատրաստ է և շուտով կը սկսեն շինութիւնը, որի համար որոշված է 5000 ռուբլի: Ուսումնարանը ներկայ մանկավարժական պահանջներին համապատասխանող 5 դասարան պիտի ունենայ: Փոքր-Սալան Նոր-Նախիջևանի գիւղերի մէջ միակն է, որը աղայոց և օրիորդաց խառն դպրոց ունի: Գանկալի էր, որ միւս գիւղերն էլ օրինակ առնէին սրանից:

ՍԱՂԱՆՆԵՐ մեզ հաղորդում են. «Մինչև հիմա արևի երես չենք տեսել: Չը նայած որ այժմ գարուն է, այնուամենայնիւ ձմեռային անձրևները պակաս չեն մեղանում: Փողոցներում կիսված ցեղեր և սառնիկ անձրևից գոյացած զետեղը խանգարում են ժողովրդի երթևեկութիւնը: Այդ սրբառատ անձրևների շնորհիւ, ամսիս 16-ին, գիւղից երկու վերստաչափ հեռավորութեան վրա գտնվող Նոր-Փայ կոչված տեղի գետը վարարած լինելով՝ համագիւղացի մի երեխայ զոհ գնաց գետի կատաղի հոսանքին:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՅ մեզ գրում են. «Էջմիածնի վանական իշխանութիւնը կարգադրել է բաւականաչափ տան և այգու տեղեր բաժանել վաղարշապատում: Սակայն ցաւել է, որ այս հանգամանքից օգտուողները մեծ մասամբ պատկանում են առաջնակարգ և հարուստ գետակարգին, որոնցից մի քանիները մինչև անգամ սե-

փական տներ ունեն, մի քանիները ունեցել են, բայց ժամանակին լաւ գնով վաճառել են, կան և այնպիսիները, որոնք բոլորովին վաղարշապատի ընտելներն չեն համարվում. իսկ մնացածներն էլ թէև տուն ու այգի չունեն, սակայն այնպիսի աշխատանքներ ունեն և նույնպէս այնքան ապահովված են, որ ամենայն հնչառութեամբ կարող են իրանց համար տուն և այգի գնել: Գանկալի է, որ վանական իշխանութիւնը մի առանձին մասնաժողով կազմի՝ քննելու վաղարշապատի բոլոր տուն և այգի չունեցողները գրութիւնը, որպէս զի միւս դասակարգերը ես զրկւած չը մնան օգտուելուց:

ՀԻՆՆԱԽԱՅԻՆՆԵՐ մեզ հաղորդում են. «Չարմանալի անտառներովեալ են վերաբերվում մեր քաղաքացիները մի այնպիսի օգտակար հիմնարկութեան, որպիսին է Բարեգործական ընկերութեան ճիւղը. նրանց համար հիմնական բուրդի անգամաձեւը մի շատ չնչին գումար է, համեմատելով նրանց ըէֆէրի և իր-դուր վաճառած փողերի քանակութեան հետ: Լը-տում ենք, որ թիֆլիսեան նախիջևանցիներից 12 հոգի անգամ են գրվել և անգամաձեւները ուղարկել են այստեղի ճիւղին: Գանկալի է, որ Բարեգործական ընկերութեան տնօրէնական ճիւղի վարչութիւնը յանձնվի բարեխիղճ և եռանդուն անձնաւորութիւնների, որպէս զի կարելի լինի ընկերութիւնը բուն նպատակին ծառայեցնել: Բացի այդ ցանկալի է, որ կենտրոնական խորհուրդը միջոցներ ձեռք առնի ընկերութեան ընթերցարանը վերաբացելու համար, որը, անշուշտ, կը բազմացնի անդամների թիւը. իսկ այս վերջին դէպքում հասարակութիւնը թէ իր ընթերցանութեան ծախսը կը յաղեցնէր և թէ նույնպէս կապաւորվի ընկերութիւնը...»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վ. ԲԻՆՆԱՎՈՒԹԻՒՄԻՅ

Կ. Պօլսից գրում են «Times» լրագրին ապրիլի 20-ից, «Որովհետեւ Բ. Գուրը մինչև այսօր ոչինչ չը պատասխանեց վեց մեծ պետութիւնների բողոքին՝ Չէյթանում մասնատակաւ գայմագամ նշանակելու մասին, ուստի ղեկավարները որոշել են դուժարվել և խորհրդակցել իրանց ապագայ գործողութեան զանալի մասին: Վիեննայից հեռագրում են, որ Բիւրդերը մի քանի յարձակումներ գործեցին հայերի և նեոտուրքականների վրա գիւղերում. մի քանի հոգի սպանվեցին և նը-րանց թէւում ծարման գիւղի քահանայ: Քիւրդե-րի տրամադրութիւնը փոքր ինչ երկիւղ է ազդում:

Կ. Պօլսից հեռագրում են «Times» լրագրին, որ այն 29 հայերը, որոնք նորերս մի ոստիկան սպանեցին Ղալաթիայում, դուրս են եկել ոչ թէ յեղափոխականների, այլ հասարակ ոճրագործների, որոնց ոստիկանութիւնը վաղուց որոնում էր: Գլխաւոր յանցաւորը վաղուց կաշնաւորված է:

Հաւասար գործակալութիւնը հեռագրում է Կ. Պօլսից, ապրիլի 17-ից. «Ֆրանսիական ղեկավարը դիտողութիւններ է արել Բ. Գրան՝ Մարաշի գործերի վիճակի և այն դժուարութիւնների մասին, որ թիւրքաց իշխանութիւնները պատճառում են ֆրանցիսկան կրօնաւորներին լինի-ձէգաղտնում կրօնական օրհնատոնների կատարման ժամանակ: Ֆրանսիական ղեկավարը պահանջեց Մարաշի նահանգապետի պաշտօնակալութիւնը:

Կ. Պօլսից հեռագրում են անգլիական լրագրիներին, որ հայոց դպրոցի ուսուցիչ Պօլվի-լեար, հեղինակ «Errante» (Թափառական-կին) պիէսայի, որը նորերս ներկայացվեց Պարիզի «Oeuvre» թատրոնի բեմի վրա, կաշնաւորվել է Ղալաթիայի փողոցում: Նա կարողացաւ ազատվել միայն մի ժամից յետոյ, չորսիւ ֆրանսիական ղեկավարի միջամտութեամբ: Գետական կամօնը պահանջում է Բ. Գուրից մի խոշոր վարձատրութիւն ֆրանսիական հպատակին վերադարձնելու համար, ինչպէս և պահանջում է, որ ոստիկանութեան միջնորդը ներդրութիւն խնդրի և յանցաւոր օստիկանները պատվեն:

Բէյսերի գործակալութիւնը հաղորդում է Կ. Պօլսից, որ թիւրքաց զօրքի միայն մի մասն է հեռացել Չէյթանից և դեռ չեն գործադրված խոտաքված ներումը և տուրքերի բարձումը:

Կաթողիկոսի հոգեւորականութեան ներկայացուցիչները մէկը՝ կարդինալ Պերրո, գրել է Հերեֆորդի եպիսկոպոսին մի համակրական նամակ, որի մէջ յայտնում է ֆրանսիական կաթողիկոսների մեծ ցաւակցութիւնը հայերի զրկանքների վերաբերութեամբ և խոտաքնում է յայտնել իր խորհրդածութիւնները այդ հարցի լուծման մասին, երբ նա կը տեսակցի Բէյսի արքեպիսկոպոսի հետ:

Անգլիական ազատամիտ լրագրիները շատ խիստ քննադատում են լուրջ Սոլսբրիի վերջին ճառը՝ համարելով նրան անարժան պետական լուրջ մարդու համար և հակասող Սոլսբրիի տուած փառաւոր խոստումներին: Սոլսբրիի օրով Անգլիան զգալի կերպով զցել է իր միջազգային վարկը:

Կ. Պօլսից մեզ գրում են. «Անցած անգամ կը գրէիք թէ կառավարութիւնը կը ծախէ հայոց կալուածները, տուրքերու գանձումին համար: Այս գործողութիւնը անընդհատ կը շարունակի: Կառավարութիւնը Շապին-Գարահիսարի մէջ ա-նուրի հանած է ալիւրի գործարան մը, որուն շինութեան ծախսուած է 10,000 ոսկի, գանձե-լու համար 100 ոսկիի կալուածական տուրքը:

Կ. Պօլսից, ապրիլի 29-ից, Ռուսաց գործակալութեանը հեռագրում են, որ այնտեղ բազմա-թիւ հայեր են ձերբակալու:

Վանից մեզ գրում են. «Հայաստանի վեց նա-հանքների բարեկարգութեանց գործադիր Շաքիր փաշան հոս ժամանեց. իրենց տներուն մէջ ապաստանած հայերին հանգստացնելու համար նա սկսել է զանազան միջոցների զիմել և ի միջի ալոց, առեկեղծութիւն, ձերբակալել է տուել քիւրդ ցեղապետներ, իրը թէ նրանցից պահանջելու անցեալ աշնան Վանի գիւղերին տուած վնասը և կողոպուտը: Բացի դրանից նա մի ղեկուցում հրատարակեց իսլամ և քրիստոնէայ ժողովրդին ուղղուած, յայտնելով որ սուլթանի կամքն է տեսնել անդորրութիւնը վերահաստատված ամբողջ նահանգներում և թէ մասնատակաւ ու բրիտանիայ արգելադրութիւնները պարտաւոր են այսուհետեւ միմեանց հետ սերով վերաբերվել: Սակայն աչքի առաջ ունենալով այդ բոլոր մեծ մեծ խոտաւորների զբոսը հայկական նահանգների ալ տեղերում, վանեցիք դեռ զգուշաւոր զիրը են բռնած: Շուկան զոց է դեռ և գործերը առաջուան պէս դադարած են: Այս սպա-տանական վիճակը սակայն դեռ չափ երկար չէ կարող տևել, ուստի և մօտալուտ են համարվում կարևոր դէպքեր այդ քաղաքում, ուր այժմ մօտ 100,000 հոգիներ ապաստանած են:

ՊԱՐՍԱՍՏԱՆ

Նորին Մեծութիւն Մուղաֆֆէր-Էլշէին Շահը հեռագրել է Նորին Մեծութիւն Թագաւոր Կայս-րին: Թաւրիզ, 20 ապրիլի.

«Վստահ Ձեր Կայսերական Մեծութեան բա-րենած համակրութեան վրա, հաղորդում եմ Ձեզ Խեղճ ղեպը, որ անգուծ հարուածով ղրկեց ինձ իմ սիրեցեալ հօրից և ընկղմեց իմ ժողովուրդը խորին վշտի մէջ: Մտանձնելով կառավարութեան ղեկը, ինձ համար առաջին պարտաւորութիւն եմ համարում պահպանել և զարգացնել այն բարեկամական յարաբերութիւնները, որոնցով, արքայ, հանգուցեալ Շահը, իմ սիրեցեալ հայրս, կապված էր Ձեր Կայսերական ընտանիքի հետ:

Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրի հեռա-գիրը Մուղաֆֆէր-Էլշէին Շահին.

«Վարայայտելով ձեր Մեծութեան սրտագին համակրութիւն, որ տածում եմ ղեպի ձեր վիշ-տը, խնդրում եմ ձեզ հաւատալ իմ անկեղծ բա-րեմալութիւններին ձեր նոր թագաւորութեան երջանկութեան և փառքի համար: Ես յոյս ունեմ, որ կը շարունակվին բարեկամութեան և բարի դրացիութեան այն յարաբերութիւնները, որոնք այնպէս աջող կերպով հաստատված էին Ռուսաս-

տանի և Պարսկաստանի մէջ՝ անկեղծ ափա-տալի Նասր-էլշէին Շահի թագաւորութեան ժա-մանակս:

Նորին Մեծութիւն Մուղաֆֆէր-Էլշէին Շահի հեռագիրը Նորին Մեծութիւն Թագաւոր Կայս-րին: Թաւրիզ, ապրիլի 22-ին:

«Անկեղծ կերպով հորհրակալութիւն եմ յայտնում Ձեր Կայսերական Մեծութեան այն համակրութեան և բարեմալութիւնների համար, որ Գուր բարենահեցիք ինձ արտայայտել ինձ և իմ ժողովրդին համար այս ծանր փորձանքի բուսկին: Օգուտ եմ քաղում առիթից մի անգամ ես ներկայացնել Ձեր Կայսերական Մեծութեան, որ իմ սրտի անկեղծ ցանկութիւնն է—չարունակել և զարգացնել վաղուց գոյութիւն ունեցող բարեկա-մութեան և բարի դրացիութեան այն յարաբե-րութիւնները, որոնք այնքան երջանիկ կերպով հաստատվել են Ռուսաստանի և Պարսկաստանի մէջ:

ԱՌԱՐԻՍ

Ինչպէս յայտնի է, մի քանի ժամանակ առաջ իտալական կառավարութիւնը մերժեց թոյլ տալ Կարմիր խաչի ուսուց բաժնին ուղարկել իր արշաւախումբը Հաբէշտան: Ռուսաց արշաւա-խումբի մի մասը տեղափոխ վերադառնալ կէս ճա-նապարհից, իսկ կէս մասը փորձեց մտնել Հա-բէշտան՝ Ֆրանսիայի աֆրիկեան երկրների մի-ջով: Այժմ, ինչպէս հեռագրում են Լոնդոնից «Новое Время» լրագրին, աւստրիացիներն էլ կազմակերպել են Կարմիր խաչի մի արշաւախումբ, որ բաղկացած է տասը բժիշկներից և ղեկավար քուրդից և չորս կրօնաւորներից, որը ճանա-պարհ է ընկել դէպի Հաբէշտան՝ խնամելու այն հիւանդ և վերաւոր իտալացիներին, որոնք գերի են գտնվում հաբէշների մօտ: Անգլիացիները, ինչպէս և իտալացիները մեծ համակրութեամբ են վերաբերվում այդ աւստրիական արշաւախումբին և սպասում են, որ նրա աղքատները հա-բէշների վրա շատ օգտակար կը լինի Եւրոպայի յանքի համար:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՅ

Կ Պ օ լ ի ս, ապրիլի 22-ին
Պարսից Շահի սպանութեան լուրը սաստիկ յուզում պատճառած է սուլթանին, որ անմիջա-պէս հրահանգ դրկեց հեռագրատան տնօրէնին ուղղակի ելալով պալատը բերել թէ՛հրանէն պարսկական ղեկապանատան հասցէին եկած պաշտօնա-կան հեռագիրները, յետոյ լուր ղրկեց պարսից ղեկապանին, որ հեռագիրները կարգաւոյ յատուկ (déchiffre) տեսակը առնելով ելալով պալատը դայ: Քիչ մը զարմանալի է, որ պարսկական դեա-պանը ոչ միայն չը բողոքեց այս հիւանդ քմա-հանդիսի դէմ, այլ և արագափոյթ եղանակով դո-հացում ստաւ:

Հոս կառավարութիւնը ամէն ջանք կընէ մա-մուլին միջոցաւ իրը բնական մահ ցոյց տալու համար Շահին սպանութիւնը. տեսակ մը հիւանդ քմահանդէս ալ աս է. ամէն ատեն որ քաղաքա-կան անձնաւորութիւն մը կը սպաննուի, թիւրք-երը մեծ իրարանցում ցոյց կուտան քողարկելու բոլոր աշխարհի ծանօթ իրողութիւն մը, հոգ չէ թէ սպաննուողը ու է առեւտրութիւն չունեցող իրենց հետ և ղեպերն տեսարանն ալ բերաւոր մղուններով հեռու Էմբուի թիւրքեայէն: Թիւրքե-րը բերեց չեն կոչու, ընդունել թէ անհատ մը կրնայ ձեռք վաճաճել իշխանութեան ներկայա-ցուցի մը վրա:

Զարմանալի չէ ուրեմն, եթէ դուրսը տեղի ու-նեցած այս տեսակ դէպքերը սաստիկ տալաւորու-թիւն առաջ կը բերեն սուլթանին ուղեղին վրա, և Պարսկաստանի մէջ Շահի մը սպանութիւնը Կ. Պօլսի ձերբակալութիւններու պատճառ կըլ-լայ: Միւրգա Բիւզա, Շահին սպաննու, կը վերաբե-րի Պապէք կոչուած աղանդին, որուն հետեղ-ներ շատ կան Պօլսոյ պարսիկներուն մէջ: Սուլ-թանը սկսած է կասկածել, որ չըլլայ թէ այդ պապէքները դաւադրութիւն մըն ալ իր անձին դէմ սարքեն. արդէն քանի մը ձերբակալութիւն-ներ տեղի ունեցան. կը կարծուի թէ թիւրք կա-ռավարութիւնը հեռզհետէ շատ մը պարսիկ իշա-վարներ պիտի ձերբակալէ և արտաքսէ:

Եւ իրաւունք ալ ունի. ազատական, յեղափո-խական շարժումը փոխանակ մարկու, սոսկալի

կայաններուն մէջ երկուսով հակադրապաշտպանութիւններ կընէ թիւրք տարրին մէջ: Գերակարգութիւններուն համարը չի կայ: Անցած օր ալ երկու բարձրաստիճան ղեկավարականներ վստահութեամբ զգալով անձեռնմխելի փախստի Պօլսէն: Պ—ի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիեննայից հեռագրում են «Новостям» լրագրին, ապրիլի 24-ից. «Այստեղի պարսից գետնապարտէս (Նարին) յայտնել է «Neue Freie Presse» լրագրի թղթակցին, թէ Ֆրանսիան, Աւստրիան և Թուրքիան հետեւեցին Ռուսաստանի և Անգլիայի օրինակին և ճանաչեցին Մուղաֆ-Ֆէր-Էդլիքին: Եւս: Թղթակցի հարցմունքին՝ ռուսական ազդեցութեան մասին Պարսկաստանում, ղեկավարը պատասխանեց. «Ռուսաստանը, իր իմաստուն քաղաքականութեան շնորհիւ, ամեն տեղ ազդեցութեան ունի, մինչդեռ Անգլիան դուրսում է անապատ թէ Թուրքիայում և թէ Պարսկաստանում»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՍԿՎԱ, 29 ապրիլի: Ապրիլի 28-ին Մոսկով հասաւ Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ, ծախարար օրէր-ցեղեմանի մէջտեղը, զվարդայի զօրաբանի հրամանատարը, հոգեւորական և նոյնպէս նիկոլայեան երկաթուղու 9 ղեկավարական գնացքներ և ընթացեալներ: 2 գնացքներ: Թող արված է ֆրանսէլէն լեզուով թագադրութեան նկարագրութեան հրատարակութիւնը:

ԲԵՐԼԻՆ, 29 ապրիլի: Կայսերական Համալսարանի մէջ տպւած է կայսերական մանիֆէստ, որի մէջ Ֆրանկֆուրտի դաշնագիր կատարելու 25-ամեակի առիթով, կայսրը երախտագրութիւն է յայտնում բոլոր ծառայող և հրաժարական տուած քաղաքացիական պաշտօնականներին, որոնք իրանց ծառայութիւններով նպաստել են 1870-1871 թվերի մեծ աշխուժեցմանը:

ՖՐԱՆԿՖՈՐՏ ՄԱՅՆ-ՎԻՍՏ, 29 ապրիլի: Վիլհելմ կայսրը հրոստատարական հեռագիր ուղարկեց իշխան Բիսմարկին Ֆրանկֆուրտի դաշնագրի 25-ամեակի առիթով:

ԱԹԷՆԵՐ, 29 ապրիլի: Թագուհին, Նիկոլայ և զէօրդի արքայազնները ապրիլի 27-ին ճանապարհ են ընկած Սեփաստօղ: Թագաժառանգ արքայազն Կոնստանտինը յետագայից իր գնացքի գլուխ Ռուսաստան:

ՄՈՍԿՎԱ, 30 ապրիլի: Ապրիլի 29-ին թագադրութեանը եկող պաշտօնական անձինք հրոստատարական ծառայողներ Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչին:

Նամակներ և հեռագրեր թագադրութեան հանդէսներին Մոսկով եկող թղթակցներին համար կարգով են ուղարկել թղթակցներին բերօրին: Պետրովկա, Բալանտովսկի պէրէֆեկտ, տուն կրկնակի:

ՊԱՐԻԶ, 30 ապրիլի: Ֆրանսիական արտակարգ ղեկավարութիւնը, որ պէտք է ներկայ լինի թագադրական հանդէսներին, ճանապարհ է ընկնում մայիսի 6-ին:

ՊԱՐԻԶ, 30 ապրիլի: Տեղի ունեցան 28 կրկնաթուղթարկութիւններ: Ընտրված են 5 հանրապետականներ, 11 արմատականներ, 3 արմատական-սօցիալիստ, 9 սօցիալիստներ:

ՊԱՐԻԶ, 30 ապրիլի: Ստացված են 351 քաղաքներում տեղի ունեցած քաղաքային ընտրութիւնների հետեւեցները: 254 քաղաքներում մեծամասնութիւնը կազմում են հանրապետականները, 85 քաղաքներում՝ արմատականներ կամ սօցիալիստներ, 20 քաղաքներում պահպանողականներ: Մնացած 12 քաղաքներում վերջնական հետեւեցքը ղեկ են չէ ստացված:

ԱՆՏՎԵՐ, 30 ապրիլի: Ապրիլի 28-ին, երեկոյան, տեղի ունեցաւ երկու վաղ գործով Մադագասկար դիմող գնացքի ընդհատումը մի օրի: Գնացքի հետ: 5 օֆիցերներ սպանված են:

ԴԵԼՅԵՆ, 30 ապրիլի: Մայիսի 5-ին պրինց Ղեօրդ ճանապարհ է ընկնում Մոսկով:

ՎԻԵՆՆԱ, 30 ապրիլի: Հասաւ չէրնոգորական թագաժառանգ պրինցը, որը գնում է Մոսկով:

ԼՈՆԴՈՆ, 30 ապրիլի: Մի զօրեղ նաւատորմ Նիւ-Եթիլի նաւահանգստում կենտրոնացնելու փաստը ներգործական միջոցների նախադուռն է համարվում Կղզայի վերաբերմամբ:

Սիւլայից հեռագրում են, որ միջոցներ են ձեռք առնված հնդկական երկու հետեւի գնդեր ուղարկել Սուաիլի:

ՍԻՄԵՐԱ, 30 ապրիլի: Որոշում է կայացել Սուաիլի ուղարկել մի զօրաբանին՝ բարկացած երկու գունդ հետեւի զորքից, մի գունդ հեծելազորից, մի բատարէայից և սպայօրններից: Այդ զօրաբանի հրամանատար է նշանակված գնդապետ Էդմունդ:

Նիւ-Եթիլի, 30 ապրիլի: Կլոմպտորդ չորհրդակցութեան առնված ամբիկացիներին մասնական պատմի դատապարտելու լուրը մեծ յուզմունք առաջացրեց: Պետական քարտուղար Օլնէյ, նախագահին արտակարգ ղեկուցում ներկայացնելու յետոյ, հաղորդեց սպանիական ղեկավարին, որ Վիլվէնդի կարծիքով, Կլոմպտի հարցը սուր կերպարանք առաւ, և որ նա պնդում է, որպէսզի գերինները մասնական պատմի չը կրեն: Սպանիական ղեկավարը աշխատում էր արգարացնել գերինայ վէլլէրի գործողութեան եղանակը միջազգային իրաւունքի տեսակէից, շայց Օլնէյ պատասխանեց նրան խստութեամբ. ղեկավարը խոստացաւ հեռազրկ Մադրիդ: Միացեալ-Նա-հանգներին նախագահը հրամայեց ուղարկել Մադրիդի ամբիկական ղեկավարին և Հալանայի ամբիկական ընդհանուր հրապարտին հեռագրներ այս բովանդակութեամբ, թէ Վիլվէնդի առանց քաղաքացիական դատարանով մասնական պատմի դատապարտված ամբիկացիների պատմից կը համարի ոչ բարեկամական: Հաղորդում են, որ վերոյիշեալ հեռագրի ընդհանուր պատճառով Ֆրանկֆուրտի նախագահակալը հրամանագրեց 5-րդ բատարէային պատրաստվել ճանապարհ ընկնելու:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Ապրիլի 30-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծե . .	94 ր. 20 Կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 > 90 >
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 > 30 >
Ոսկի — — — — — արծե . .	7 > 50 >
Մաքսային կուպոններ — . .	149 > — >
Բորսային դիսկոնտ — . .	5 > 70/0 >
4% պետական բենտա	99 > — >
Ներքին 5% առաջին փոխառութ. .	283 1/2 > — >
— — — — — երկրորդ — . .	252 > — >
5% զրաւ. թղթ. ազն. կալ. բանկի .	215 1/4 > — >
5% պետական երկաթուղ. բենտա .	100 1/2 > — >
4% ներքին փոխառութեան	93 2/3 > — >
4 1/2% զրաւ. թղթ. ազն. կալ. բանկի .	100 1/2 > — >
Ազն. կալ. Պետ. բանկի խաղաղութ. .	— > — >
4 1/2% վկայակ. գիրդ. հող. բանկի .	101 > — >
Փոխ. կրեդիտ. ընկեր. մատալ. . .	— > — >
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	
Ընկերութեան օրինաւորականը .	101 > — >
Մոսկովայի քաղաք. օրինաւորականը .	101 1/4 > — >
Օգէսայի — — — — —	101 > — >
Թիֆլիսի — — — — —	98 1/4 > — >
Թիֆլիսի կալ. բանկի 6%	101 > — >
5% — — — — —	99 > — >
Քուլմայի — — — — — 6%	101 > — >
5% — — — — —	99 1/2 > — >

ԽՈՐԱԳԻՐՆԵՐ ԱՆԻՔՍԱՆԴԻ ՔԱՆԱԹԱՐ

Հրատարակելէ՝ ԱՆԻՔՍԱՆ ԱՐՄԻՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուրիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

Ա.Ռ.Ա.ՈՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբու- ժութեան, սիֆիլիս և վէներական հիւանդու- թիւներին:

Գ. Գ. ՋԻՎՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեւրոլոգիայի:

Կին-բժիշկ ԳՈՒՆԱՅԷՎԱ-ՐՈՒԻՆԵՎՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ:

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԶ—12—1 ժ. ակնաչի, կո- կորդի, քթի և կրծքի հ. երկուշարթի, չորեքշա- թի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երե- խայցի և նեւրոլոգիայի հ. երեքշաբթի, հինգշաբթի և չորեք:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երե- խայցի հ:

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻԶ—5—6 ժ. երեք, հինգ, և շա- բաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշարթի չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և տեսական օրգանների հ. ներքին և մարթի հ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոչորացուցական հետազոտութիւնների է անում մէզի, խիւի, ա- րեւան, կաթի և այլն:

Վճար 50 Կ: Համախորհրդի (Կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝ ԲՈՂԱԿԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Կիրակի, 1896 թ. մայիսի 12-ին Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում կը կայանայ Թիֆլիս քաղաքի հաշուով պահվող ուսումնարանների չքաւոր աշակերտներին նպաստող ընկերութեան անգամները:

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ Ը

Պարագմունքի առարկաները լինելու են. 1) 1895 թ. հաշուի քննութիւնը և հա- տատութիւնը. 2) նախագահի, փոխ-նախագահի, կարգադիր մասնագործի երեք ան- դամի, քարտուղարի և զանապահի ընտրութիւնը: Սկիզբն է առաւօտեան 11 ժամին: (№ 50) 1—3

ՖՈՏՕԳՐԱՖԻԱ Տ. Մ. ՎԱՐԳԱՆԵԱՆՑԻ

Պատիւ ունեմ յայտնել, որ նոր բացել եմ ՖՈՏՕԳՐԱՖԻԱ, ուր ապրիլի 30-ից ընդունում եմ ամեն տեսակ լուսանկարչական պատուէրներ ամենապարագային քննութիւնով զործը կատարվում է չքեղ և բարեխղճութեամբ. նկարները վերցնվում են ամենանոր կատարելագործված գործիքներով:

Ֆոտոգրաֆիան զանվում է Միքայէլեան փողոցի վրա, տ. № 95, Պուշկինական պողոտան կից: (№ 48) 2—2

ՊԱՆՍԻՈՆ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆԻ

(ՄԱԿԱ ԵՐԿՐՈՐԻ ԿԱՐԻ ՄԱՍՆԱԻՐ ՈՒՍՈՒՄՆ. ԹԻՖԼԻՍԻՄ)

Ընդունում է երթեւեկ, կիսաթոշակաւոր և զիջութիւն աշակերտներ, պատ- րաստում է գի մնազի աների, կադետներ, կորպուսի, զեմլէմէի, րնի, րէ ալակաւ ուսուցիչներ, արտաւարական համար 60 րուբլի:

Ուսումնական տարվայ վարձն է փոքր պատրաստական համար 150 րուբլի:

Այս տարի գիմնազիա և ղեկական ուսումնարան մտնելու համար քննութիւն տուող 12 աշակերտներից 11 հոգի յաջողութեամբ քննութիւն են տուել և ընդունվել, որ կադ- մուս է 92%:

ՈՒՍՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԻ ԱՄԲՈՂՁ ԱՄՍՈ

Հասցեն. ТИФЛИСЬ. Солоаки. Тановская ул., № 11. собст. домъ. (№ 47) (5) 4—10



ԲԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԲԻՄԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՀԻՂԿԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հաստատ մաս միներին, խորհրդներին և ուրիշ կրթողներին Այս միջոցը արտաբերում է այդ կենդանիներին զխաւորապէս բնակարաններին, այնպէս որ նրանք չեն մնում գետնայարկի տակ և չեն տարածում գարշահոտութիւն:

ՄԱԿԱՆԵՐԻ ԴԵՄ ՀԵՂՈՒԿ, սննդանոցում է նրանց ընդմիջող չա շատ հաճելի հոտ ունի և բիծ չէ թողնում ճերմակեղէնի, կօշիկներ և կարասիքի վրա: Փոշիացնելով նրան, սննդակի օգին հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեղը, ճանճը և մոծակները:

ՓՈՇԻ՝ ՄԻՋՈՒՄԵՐԻ ՆԱՄԱՐ, ամենապարագային միջոցն է բոլոր միջանոցներ և նրանց սաղմերը բոլորին սննդանոցում համար: Այդ փոշին անփութարիւնքի է լուսեր և մշակներ սննդանոցում հա- մար անկողիններում, ներքնակներում, թաղիքով պատած փայտային պատերում: Ոչնչացնելով ցե- ցը և չունենալով նափթթային անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փոխարինում է նրան. դրա համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակներ և ուրիշ մօրթեղէն իրերը պահելու համար: Փոշու ազդեցութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջանոցներ, միջանոցներ ղէմ—զրեթէ վայրկեանական է—հետեւեցը դարձանալի: (№ 23) 9—50

Հ Ա Յ Գ Ո Ր Ծ Ի Չ Ն Ե Ր Ի Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր Ը

Լուսանկար Տէր-Ղևոնդեանի մօտ վաճառվում են հետեւեալ հայ գործիչների պատկերները՝ Հոգեւորականներ. —հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿ և ՄԵՍՐՈՊԻ: Ժամանակակիցնե- րից՝ ՆԵՐՍԷՍ Մ, ԳԵՈՐԳԻ IV, ՄԱԿԱՐ և ՄԿՐՏԻՉ Կաթողիկոսներ, ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷԱՔԱՆԵԱՆԻ (Կա թողիկոս Կիլիկիայի), ՄԱՏԹԵՈՍ ՊԱՏՐԻԱՐԿ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, ԱՐԻՍԱԿԷՍ ԱՐԵՊԵՏԻԿՈՍ ՍԵՐԱ- ԿԵԱՆԻ, ԽՈՒՆԻ ՆԱՐԳԷՅԻ և ուրիշ արժանաւոր հոգեւորականներ:

Նոյն տեղը վաճառվում են. —ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ, ՐԱՖԱԵԼ, ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱ- ՆԵԱՆԻ, ՄԵՐԵՆԵՅԻ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆԵՅԻ, Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Պ. ԱԿԱՄԵԱՆԻ (բոլոր գերերում նկարված), ԽՍԻՆԻԿՈՒՆԵՐԻ, ԿԵՆԴԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ, նշանաւոր հայ ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՍԱՐԻ, ՄԱՐԻՍՍ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱՆԵԱՆ-ԱՐՄԻՈՒՆԻ, ՄՇԱԿԻ՝ ԱՇԽԱՍԱԿԻՆԵՐԻ յօդեկանական ալբոմը, նմանապէս և ուրիշ զանազան գործիչների լուսանկարները:

Վերոյիշեալ պատկերները արժեն՝ մեծադիր 3 րուբլի, ՄԻՋԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 րուբլի, ԿԱ ԲԻՆԵՍԱՅԻՆ Կոչված պատկերները՝ 40 կօպէկ, ՎԻՋԻՏ Կոչված պատկերները՝ 20 կօպէկ:

Հասցեն՝ ТИФЛИСЬ Фотография Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). ճանապարհա- ծախսը գնողի վրա է: (№ 117) 10—10

Է Ժ Ա Ն Ա Գ Ի Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն

(Կ ելիամիսովայա փողոց, տուն № 3.)

Բ Ա Ց Է } Առաւօտեան ժամ 9—2, երեկոյան 5—10

Կիրակի և տօն օրերը առաւօտեան 10—2

Տուն ամենուր համար արվում են գրքեր և պարբերական հրատարակութիւններ: Վճար՝ ամսական 20 կօպէկ և 10 կօպէկ: Ընթերցարանի մուտքը 2 կօպէկ: 30 տոմս արժեւորւում—40 Կ:

Ստացվում են՝ հայերէն 1) «Մշակ», 2) «Արձագանք», 3) «Նոր-Դար», 4) «Տարազ», 5) «Ար Բիւր», 6) «Մուրճ», 7) «Արեւիք», 8) «Շաւիղ», 9) «Արարատ», 10) Ժողովածուներ:

Ռուսերէն. 1) «Кавказъ», 2) «Новое Обозрѣніе», 3) «Тифлисскій Листокъ», 4) «Русскія Вѣдомости», 5) «Новости», 6) «Новое Время», 7) «Биржевыя Вѣдомости», 8) «Каспій», 9) «Иверія», (վրացերէն), 10) «Русское Богатство», 11) «Русская Мысль», 12) «Новое Слово», 13) «Вѣстникъ Европы», 14) «Сѣверный Вѣстникъ», 15) «Миръ Божій», 16) «Недѣля».

(№ 31) 10—10